ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԸ
(XVIII դ. 2-րդ կես – 1922)

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.

XVIII դ. ևս, մինչև իր պատմության վախճանը, Զմյուռնիայի հայ գաղթօջախը մնում էր արևմտահայ երկրորդ խոշոր կենտրոնը Կ. Պոլսից հետո: Օսմանյան և լեվանտի շուկաներում զմյուռնահայ վաճառականության նշանակության հարատևումը, հոգևոր և նյութական կապերի խորացումը Էջմիածնի կաթողիկոսության հետ՝ մի հայտնի չափով ամրապնդեցին գաղթօջախի ազգային նկարագիրը: Հատկապես XIX դ. 1-ին կեսին այս իրողությունը զգացնել տվեց ազգային մշակույթի զարգացման բնագավառում: Մինչև վերջ գաղթօջախը գրեթե նույնությամբ պահպանեց իր սոցիալական ամ-բողջականությունը իր դասային բաղադրիչներով՝ խոշոր վաճառականություն, մանր ու միջակ առևտրականություն, արհեստավորություն և աշխարհիկ մտավորականություն: Սակայն տեղաշար-ժեր կատարվեցին խոշոր վաճառականության, ներքին առևտրով զբաղված խավերի, ինչպես նաև արհեստավորության կացության մեջ՝ կապված միջազգային առևտրի, արհեստագործական արտադրանքի շրջանառության փոփոխությունների հետ, որ անդրադառնում էր գաղթօջախի մշակութային դիմագծի և այդ բնագա-վառում նրա տեղական ու համազգային ներդրումների վրա: Ընդ- սմին, զմյուռնահայերի թվաքանակը XVIII դ. 2-րդ կեսից մնում էր գրեթե նույն մակարդակին, ինչը հայտնի էր դեռ նախորդ դարից: 1776 թ. այն հասնում էր 6000-ի, 1812 թ.՝ 10000, 1868 թ.՝ 12000, 1898 թ.՝ 11-12000, 1922-ին՝ 30000-ի (Կիլիկիայի և շրջակայքի հայ գաղթականների հետ միասին)[1]: Պետք է կարծել, որ զմյուռնահայ բնակչության թվաքանակի տվյալները՝ նրա աճի չափավորության ակնհայտ միտումներով, հետ են մնում քաղաքի ընդհանուր բնակչության աճի համեմատությամբ (1776 թ. 102.000-ից 1898 թ. այն աճել էր շուրջ երեք և կես անգամ՝ հասնելով 340000-ի)[2]: Հ. Քոսյանը հայերի չաճող թվաքանակը բացատրում է զմյուռնահայերի շռայլությամբ, ազգային նկարա-գրից շեղվելու (բարքերի անկում, խառն ամուսնություններ, օտարամուտ սովորույթներ և այլն) երևույթով, սակայն նրա փաստարկները առավել քան վերաբերում են XIX դ. վերջերին: Կարելի է կարծել, որ այստեղ հիմնականում կարևոր նշանակություն են ունեցել օտարամուտ բարքերն ու կենցաղը: Իրավացի էր Հ. Քոսյանը, երբ գրում էր, որ «եթէ ուրիշ քաղաքներէ նորանոր ընտանիքներ չգան չմիանան, Զմիւռնիոյ հայերն նուազման ընթացքին մէջ կը գտնուին»[3]: XVIII դ. 2-րդ կեսին լեվանտական առևտրում նկատելի էր

---

[1] **Քոսեան Յ.,** *Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, հ. 1, Վիեննա, 1893, էջ 43:* **Սիմոնեան Պ.,** *Յուշամատեան հայկական Զմիւռնեան, Փարիզ, 1936, էջ 12:*

[2] **Քոսեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 43:*

[3] *Նույն տեղում, էջ 28:*

եվրոպական արտադրանքի ընդլայնման և Թուրքիայում էժան հումքի շուկայում դրա ծավալ- ման իրողությունը, որ սահմանափակում էր օսմանյան տեղական առևտրի մրցակցային կարողությունները: Թուրքիայի և եվրոպական քաղաքների միջև գործող ոչ քիչ թվով հայ վաճառական- ներ թողեցին եվրոպական բնակատեղիները և վերահաստատվե- ցին Զմյուռնիայում: Սլարսը նշում էր, որ այս ժամանակներում Զմյուռնիա են վերադարձել Վենետիկում, Ավստրիայում, Հոլանդիայում և այլուր հանգրվանած վաճառականները[4]: Բացառություն էր կազմում Տրիեստը, որտեղ ավստրիական կայսրուհի Մարիա-Թերեզան արտոնություններ էր տվել հայերին՝ այնտեղ բնակվելու համար: Տրիեստում հայ (այդ թվում նաև կաթոլիկ) վաճառականները հաջողությամբ առևտուր էին անում XVIII դ. վերջին երեսնամյակից գրեթե մինչև XIX դ. 2-րդ կեսը: 1820-1840-ական թթ. այստեղ էր գործում զմյուռնահայ խոշոր վաճառական Գր. Աբելյան-Գուլասպյանցը՝ հայ նշանավոր բարեգործներից մեկը: Այս մեծահարուստը, կարելի է կարծել՝ նաև տրիեստաբնակ այլ հայ վաճառականներ, միավորված էին առևտրական ընկերությունների մեջ: Ինքը՝ Աբելյան-Գուլասպյանցը, իր կտակի մեջ (1848) հիշում է "Antonio Gratie Compagnien" առևտրական ընկերության մեջ իր ներդրած կարողությունը՝ 20 հազար ֆիորինի չափով[5]: Նրա հետ միասին Տրիեստում գործում էին զմյուռնահայ այլ վաճառականներ՝ Ապրո Ապրոյանը և Պետրոս Յուսուֆյանը: Վերջինս, ի դեպ, օգտվելով իր եղբայր Պողոս Յուսուֆյանի՝ Եգիպտոսում ունեցած քաղաքական բարձր դիրքից, Տրիեստում վաճառում էր Եգիպտոսի արտահանած գյուղատնտեսական ապրանքները՝ մեծածախ գներով[6]: 1810-1820-ական թթ. Տրիեստում առևտրական գործարքներ էր իրականացնում Կ. Եղիվարդյանը, որը զբաղվում էր կարմիր մետաքսի, կտավի և գործվածքեղենի արտահանումով[7]:

Հոլանդիայի հետ ևս զմյուռնահայ վաճառականության կապերը մի որոշ չափով պահպանվեցին XVIII դարում: Հոլանդական նավերի բեռնաշրջանառության նշանակալի ծավալները, ինչպես և դրան նպաստող՝ գլխավոր շտատների կողմից ճկուն հարաբերությունների պահպանումը թուրքերի հետ՝ հաջողություն էին ապահովում առևտրահրապարակներում հոլանդացիների գործունեության համար: Ամստերդամում գտնվող հարուստ զմյուռնացիների հետ Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսները մշտական կապեր էին պահպանում: XVIII դ. վերջին քառորդին Ամստերդամում առևտուր էին անում զմյուռնացի Առ. Սավալանյանը, Ա. Մասեհյանը, Մնացականը և այլք: Առաջին երկուսը 1781 թ. իրենց ծախքով Ամստերդամից էջմիածին էին ուղարկել զանգեր: Զմյուռնացի վաճառականները մասնակցում էին Հոլանդիայից այնպիսի ապրանքների ներմուծմանը, ինչպես մահուդ,

---

[4] *Նույն տեղում, էջ 33:*

[5] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 187, վավ. 119:*

[6] **Ճերմակեան Թ.,** *Եգական դէմք մը Իզմիրի մէջ (Բիւզանդիոն, 30.VII.1905):*

[7] *Մատենադարան, ձեռ. N 10272:*

գործվածքեղեն, մետաղներ՝ անագ, պողպատ և այլն, որոնք փաստորեն հոլանդացիների մենաշնորհն էին[8]: Ամստերդամի հայկական համայնքը գոյատևեց մինչև XIX դ. սկիզբը, երբ նապոլեոնյան պատերազմների հետևանքով այդ քաղաքը զրկվեց իր ինքնուրույն առևտրական նշանակությունից[9]:

Ուշագրավ է պարսկական մետաքսի առևտրի անշքացումը XVIII դ. կեսերին: Դեռևս 1730-ական թթ. Նադիր շահն արգելել էր մետաքսի արտահանումը Թուրքիա, որ լուրջ վնասներ էր պատճառում փոքրասիական առևտրին: Մասնավորապես Զմյուռնիան և Հալեպը դրա հետևանքով կորցրեցին մետաքսի շահութաբեր առևտուրը: Աստիճանաբար մարեց XVIII դ. 2-րդ կեսին սակավամարդ դարձած Սպահան-Թավրիզ-Կարին-Թոքատ-Զմյուռնիա առևտրական ուղին: Մետաքսի վաճառականների մի մասը տեղափոխվեց Զմյուռնիա: Նաև սրանց է վերաբերում 1743 թ. Ս. Ստեփանոս եկեղեցու արձանագրության ակնարկը, որ նորոգումը կատարվել է «արդեամբ եւ տրօք առհասարակ ժողովրդոց լուսաւորչածնից տեղացւոց եւ վաճառականաց եկաց եւ բնակաց»[10]:

Անկախ մետաքսի առևտրի ճակատագրից, զմյուռնահայ վաճառականությունը շարունակում էր իր կապերը ռուսական առևտրական կենտրոնների հետ: Նոր ջուղայեցի, ագուլեցի, նախիջևանցի, դափանցի և մեղրեցի վաճառականները Զմյուռնիայում հաստատվելուց հետո էլ պետք է շարունակեին իրենց վաղեմի առնչությունները: Որոշ վաճառականներ բնակություն հաստատեցին Ռուսաստանում: 1780 թ. Պետերբուրգում էր վախճանվել Պ. Վեմյանը՝ զմյուռնացի հայտնի Վեմյանների ընտանիքից:

XIX դ. 1-ին քառորդին Պետերբուրգում և Աստրախանում առևտրական գործերով էր զբաղվում զմյուռնացի Ա. Չելեբովը, որ նաև ծառայում էր ապակու կայսերական արհեստանոցում[11]: Ավելի ուշ՝ XIX դ. 1-ին կեսին, զմյուռնահայ վաճառականները առնչություններ ունեին Օդեսայի հետ՝ օգտվելով ռուսական սևծովյան առևտրական ուղիներից: Վերը հիշված Կ. Եղիվարդյանի հաշվետումարից երևում է, որ նա Օդեսա է առաքել մետաքս, վաճառել կտավ, փալամուտ (ձկան տեսակ), մետաքսի գործվածքեղեն և այլն[12]:

Օսմանյան կառավարությունը ակնհայտ անբարյացակամությամբ էր վերաբերվում Ռուսաստանի հետ հայ վաճառականության գործառնություններին, և այս մոտեցումը չէր հապաղում հալածանքի վերածվել ռուս-թուրքական պատերազմների պայմաններում: XIX դ. սկզբին ամասիացի առևտրական Կարապետ Մանուկ Օղլուին կառավարությունը մահվան էր դատապարտել Օդեսա ապրանք առաքելու համար:

XVIII դ. 2-րդ կեսին զմյուռնահայ վաճառականները մետաքսի առևտրի հարկադրական մարումը փոխարինեցին բամբակի արտահանմամբ՝

---

[8] **Данциг Б.** *Русские путешественники на Ближнем Востоке, М., 1965, с. 80.*

[9] **Սարուխան Ա.,** *Հոլանդան եւ հայերը: Վիեննա, 1926, էջ 62:*

[10] **Քօսեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 58:*

[11] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 54, վավ. 294:*

[12] *Մատենադարան, ձեռ. N 10272:*

կողմնորոշվելով դեպի եվրոպական մանուֆակտուրային արտադրության պահանջարկը: Բամբակի մշակության՝ Էգեյանի մերձափնյա վայրերը դարձան այդ մշակույթի արտահանության կենտրոններ (Մանիսա, Այդրն, Բերգամա, Դենիզլի, Թիրե): Այս ժամանակաշրջանում, նշում է Ղ. Ինճիճյանը, Զմյուռնիայի առևտրականությունը «Ամէն տարի 40 հազար բեռ (պալեայ) բամպակ Ֆրէնկիստան կը խրկէր, 20 հազար բեռ ալ բամպըկէ մանած կը խրկէր: Սա բեռները քովի գեղերէն Իզմիր բերելու, Իզմիրէն ալ ծովեզերքը տանելու միայն ճամբու խարճ՝ 1786 որ տարին որ մենք Իզմիր գտնուեցանք, շաբաթ կըլլար, որ 300-500 քէսէ (քսակ – Խ. Ա.) կը խարճէին վաճառականները»[13]:

XVIII դ. վերջերին և XIX դ. 1-ին կեսին Զմյուռնիայում բնակություն հաստատած հայ վաճառականների մեջ աչքի են ընկնում կեսարացի ձեռներեցները: Զմյուռնիայում էր ծնվել Ապրոյան գերդաստանին փեսայացած կեսարացի Հովսեփ Պողոսյանի որդին՝ Պողոս Յուսուֆյանը, հետագայում Եգիպտոսի նշանավոր պետական գործիչը (1775-1844): Նախ Զմյուռնիայում, ապա Կ. Պոլսում հաստատվեցին Կեսարիայից եկած Կյուլպենկյանները, որոնք զբաղվում էին տեղական արտադրության ապրանքների առևտրով:

XIX դ. 2-րդ տասնամյակին՝ դարձյալ Կեսարիայից, Զմյուռնիա էր տեղափոխվել Պալեոգյան վաճառական ընտանիքը, որ հայտնի էր տեղական գյուղատնտեսական ապրանքների վաճառքով: Կեսարացի վաճառականները հաջողակ էին նաև մանուֆակտուրային ապրանքների առևտրում՝ իբրև արտահանողներ, որոնք հիմնել էին առևտրական տներ[14]: Այս վաճառականների մի մասը նաև կալվածատերեր էին և առևտրական շրջանառության մեջ էին դնում իրենց սեփականությունից ստացված բերքերը: Նույն ժամանակներում (XIX դ. կեսերին) զմյուռնացի մեծահարուստները առևտրական տներ են հիմնում արտասահմանում, ինչպես Կ. Էքիզյանը, որը Մանչեստրում բացել էր «Պ. Պապո վաճառատունը», որին այստեղ հետևեցին Հ. Սպարթալյանը և այլք[15]: Եվրոպական թեթև արդյունաբերական արտադրանք էին վաճառում 1-ին կարգի վաճառականներ «Բաբազյան-Անտոնյան ընկերությունը», Ավետիքյանները, Գույումճյանները, Թոփալյանները, «Եսայան-Պերկամալյան ընկերությունը», Կ. Արապյանը և շատ ուրիշներ: Էգեյանի մերձափնյա տարածքների գյուղատնտեսական առևտրում զգալի մասնակցություն ունեին Ա. Աքչելյանը, Ա. Քյոլեյանը, Էլմասյանները, Դավիթ-յանները, Զաքիյանները, Վարպետյանները և այլք: Մասնավորապես թզի առևտրում էր հռչակվել Ա. Համբարձումյանը[16]: Տեղական գյուղատնտեսական արտադրանքի (բամբակ, ցորեն, չամիչ, ափիոն, թուզ և այլն) արտահանման

---

[13] **Ինճիճեան Ղ.,** *Դարապատում, 1750-1757, Վենետիկ, 1824, էջ 232:*

[14] **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ, Գահիրէ, 1937, էջ 1943-1944, 1955, 1959:*

[15] **Քօսեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 288-290: XVIII դ. վերջերին Եվրոպայում առևտրական տներ էին հիմնել նաև հույները, որոնք մրցակցում էին հայ վաճառականների հետ:*

[16] *Նույն տեղում:*

շնորհիվ Զմյուռնիան 1860-1870-ական թթ. կրկնապատկեց իր առևտրական հաշվեկշիռը:

Առանձին խումբ էին կազմում ոսկեթել բանվածքների, ծաղկանկար սրբիչների և թաշկինակների վաճառականները: Մասնավորապես բամբակի միջազգային առևտրաշրջանառության թելադրանքով բամբակազտիչ գործարաններ հիմնվեցին Այդընում, Քրքաղաճում և Կասաբայում[17]: Բավականաչափ ընդլայնվեցին գինու և գորգերի արտադրությունները Զմյուռնիայում, Մանիսայում և Քըրքաղաճում, որոնց ոլորտն էին ընդգրկվել նաև հայերը: Նույն կերպ վիլայեթում զարգացում ապրեցին ձիթագործարանները, ալրաղացները և լայն սպառման այլ ապրանքների արտադրությունները: 1840-1860-ական թթ. Զմյուռնիայում գործում էր հայերի կտավի գործարանը՝ 400 աշխատատեղով, ինչպես և ապակեգործական ապրանքների գործարանը: 1847 թ. աշխատում էր Հ. Տյուզյանի հիմնած թղթի գործարանը՝ տարեկան 500.000 օխա (թուրքական չափուկշռի միավոր, հավասար է մոտ 1 կգ 225 գ) թղթի արտադրանքի կարողությամբ[18]:

XIX դ. 2-րդ կեսին տեղական արտադրության վերելքը մեծապես պարտական էր Էգեյանի տարածաշրջանում երկաթուղաշինության զարգացմանը: 1860 թ. շարք մտան Զմյուռնիա-Այդընը, 1865 թ.՝ Զմյուռնիա-Կասաբա երկաթուղիները: Հետագա տասնամյակներին սկսեցին գործել սրանց ճյուղավորումները՝ ընդգրկելով Մանիսան և շրջակայքը, իսկ Այդըն-Նազիլի, Ալեշեհիր-Ափիոն Կարահիսար երկաթուղիների շինարարության մեջ աշխատող մշեցի և վանեցի բանվորները ավելացրեցին զմյուռնահայերի թվաքանակը[19]: Երկաթուղային ցանցի տարածումը կտրուկ բարձրացրեցին Զմյուռնիայի նավահանգստային նշանակությունը արտածման և ներմուծման տեսակետից: 1885 թ. նրա 1232 տ բեռնատարողությունը 1899 թ. հասավ 2082 տ, իսկ 1909-1910 թթ.՝ 2 մլն 800 հազար տ[20]: Առևտրական շրջանառության այսպիսի ընդարձակումն ուղեկցվում էր զմյուռնահայ առևտրականության համապատասխան վերելքով:

XVIII դ. մինչև վերջ՝ 1922 թ., գաղթօջախի ամենաբազմամարդ տարրը շարունակում էր մնալ արհեստավորությունը: Համայնքի կենսագործունեությունը մի հայտնի չափով հենվում էր արհեստագործական աշխատանքի վրա, և այդ ոչ միայն Զմյուռնիայում, այլև շրջակայքում: Ինչպես նախկինում, արհեստավորները մտնում էին համքարական կազմակերպությունների՝ էսնաֆի մեջ, թեև չի բացառվում կորպորատիվ միություններից մեկուսի գործող արհեստավորների գործունեությունը: Զմյուռնիայում և շրջակայքում իրենց գործառույթն էին իրականացնում դերձակները, հյուսները, մետաքսագործները, ժամագործները, կոշկակարները,

---

[17] *Handbook for the Travellers in Turkey in Asia. London, 1872, p. 271.*

[18] **Սարգիսյան Ն.,** *Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 10:*

[19] *Արևելք, 14.VIII.1902:*

[20] **Петросян Ю. А., Юсупов А. Р.** *Измир, М., 1973, с. 25.*

գորգագործները և այլն: Ինչպես և բնակչության մյուս խավերը, նրանք ևս հարկ էին վճարում իշխանություններին, որ մինչև ջիզյեի վերացումը մտնում էր այդ հարկի ընդհանուր գումարի մեջ: Զմյուռնացի արհեստավորները գործում էին աշխատանքի ավանդական բաժանման սկզբունքով՝ կազմակերպության ներսում:

Իրենց արտադրած ապրանքների վաճառքը նրանք կատարում էին շուկաներում, իրավունք ունեին առանձին խանութ բացել՝ իշխանությունների արտոնությամբ: Տնայնագործների մեջ համբավված էին Մանիսայի ոստայնանկները, որոնք խոշոր վաճառականների ձեռներեցության շնորհիվ միավորվում էին ընդարձակ արհեստանոցներում կամ տանն աշխատելով՝ կատարում էին պատվերներ: XX դ. սկզբին Մանիսայում հյուսվածքեղենի գործատուն ուներ Մ. Սարըյանը, որ «գործ կը հայթհայթէր նաև տունը աշխատողներու»[21]: XIX դ. 2-րդ կեսից առավել զգալի է դառնում այն երևույթը, որ արհեստագործական արտադրանքը ավելի մեծ չափերով են սկսում տնօրինել խոշոր առևտրականները:

Արհեստավորները գործուն մասնակցություն էին բերում ազ- գային հաստատությունների ֆինանսական մատակարարմանը: Զմյուռնիայի Ազգային հիվանդանոցի մի հաշվետումարում (XIX դ. 1-ին կես) արձանագրված են առանձին էսնաֆությունների վճարումները: Այսպես, «մոմճիյի քովի գանձանակէն արի (առա – Խ. Ա.) - 521, տիւլպենտճիյոց գանձանակէն արի-83, պախր պետեստենի (ծովամերձ ծածկած շուկայի – Խ. Ա.) գանձանակէն արի-4532, ոսկերիչներու գանձանակէն արի-1920»[22]:

1816 թ. էջմիածնին նվիրատվություններ արած զմյուռնահայերի մեջ կան ոսկերիչ, սափրիչ, շերիտճի (քուղագործ), տոլբանտճի (մետաքսագործ), երկաթագործ, գրակագործ և այլ արհեստավորներ: Հայտնի է զմյուռնացի թյուլպենտճիների կոնֆլիկտը պոլսեցի հայ արհեստակիցների հետ: Վերջիններս օգտվել էին իրենց արտոնություններից և արգելք հանդիսացել զմյուռնացիների արտադրանքի իրացմանը, որ և մղել էր Ղուկաս կաթողիկոսին՝ պաշտպանելու «տերունի թեմում» ապրող զմյուռնացիների շահերը[23]: Զմյուռնացիների դրությունը պետք է մեղմեր 1792 թ. բացված արքունի չթագործարանը, որի գործունեությունը կախված չէր պոլսեցիների արտոնություններից:

Մինչև թանզիմաթը (1839) համայնքի ազգային վարչությունը կազմվում և գործում էր մյութեվելիական հին համակարգով՝ վակֆի սեփականությունը տնօրինող վերակացուների (գործակալների) միջոցով, որոնք ընտրվում էին համայնքի վերնախավի կողմից: Զմյուռնահայերի երկու եկեղեցիների (Ս. Ստեփանոս և Ս. Լուսավորչյան եկեղեցիներ) սեփականությունը վերահսկում էին այս մյութեվելիները, որոնց կողքին գործում էին «տարեկան իշխանները»՝ հոգաբարձուները: Զմյուռնիայի առաջնորդ Գաբրիել արքեպիսկոպոսը

---

[21] **Պոյաճեան Գ.,** *Էգեականի դիցուհին՝ Զմիւռնիան և զմիւռնահայ գաղութը: (Յառաջ, 27.X.1972):*

[22] *Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 31, վավ. 185ա:*

[23] *Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 430:*

Երուսաղեմի պատրիարքին ուղղած՝ 1832 թ. մի նամակում գրում էր, որ տեղի վարժարանների բարեկարգումն իրականացվել է «բարէջան միութէվէլօք եւ իշխանօք քաղաքիս»[24]:

Նշանակվում էր նաև Էջմիածնի վակֆների հատուկ վերակացու, որը կարգավորում էր կաթողիկոսության կալվածքների գործը: Թանզիմաթի առաջին տարիներին ընտրվում էին Ս. Ստեփանոս եկեղեցու տեսուչ, հիվանդանոցի հոգաբարձու և համայնքի կողմից քաղաքային վարչության (շուրայի մեջլիս) ներկայացուցիչ: Վարչական այս կառուցվածքը պահպանվեց մինչև 1861 թ., երբ համայնքում սկսեց գործադրվել Ազգային սահմանադրությունը:

Թանզիմաթի շրջանում զմյուռնահայ արհեստավորները ևս, ինչպես Կ. Պոլսի համապատասխան դեմոկրատական խավերը, հնարավորություն ստացան անդամակցելու համայնքի վարչությանը: 1840-1850-ական թթ. ընդլայնվեց նրանց դասային ներկայացուցչությունը: 1850 թ. ընտրվեց քառասուն մարդուց բաղկացած հոգաբարձություն, որը բաժանվեց հինգ խմբերի, և որոնցից յուրաքանչյուրն իր պաշտոնը պետք է վարեր մեկական տարով՝ մինչև 1854 թ.[25]: Առևտրաարհեստավորական ներկայացուցչության ընդարձակումը, սակայն, ամենևին չէր կարող մեղմել համայնքի սոցիալական հակասությունները, որոնք այդ ժամանակ ի հայտ էին գալիս նաև գրավոր բողոքների ձևով: 1841 թ. աշնանը երևելիների դեմ տարածվել էին «անարժան ու անճոռնի» ոտանավորներ, որոնք, «Արշալույս արարատյանի» կարծիքով, հետամտում էին «ազգերնիս նախատելու ու միամիտ հասարակութեան միտքը պղտորելու» նպատակը[26]:

Զմյուռնիայում հայ լուսավորչական համայնքից առանձնացած էին հայ կաթոլիկները, որոնց պաշտամունքային սպասարկումը 1830 թ. հետո իրականացնում էին լատին կապուչինները, իսկ այնուհետև, մեկ տասնամյակ անց՝ Վիեննայի մխիթարյանները, որոնք Այդընում հիմնել էին վանատուն՝ դպրոց: Առևտրական գործունեության թելադրանքով Էգեյանի շրջակայքի կաթոլիկ հայերի մեծ մասը աստիճանաբար տեղափոխվեց Զմյուռնիա կամ Կ. Պոլիս[27]:

Մինչև իր մայրամուտը զմյուռնահայ համայնքը (շրջակայքի թեմերով) ներազգային վարչական գործերը վարում էր ըստ Ազգային սահմանադրության: Ընտրվում էր գավառական ժողով՝ իր քաղաքական և կրոնական ժողովներով և

---

[24] Մատենադարան, Մսերյաններեռի արխիվ, թղթ. 206, վավ. 1474:

[25] Արշալույս արարատյան, 1850, թիվ 355:

[26] Նույն տեղում, 1841, թիվ 60:

[27] Հայ կաթոլիկները Էգեյանի շրջան էին գաղթել 1747 թ.՝ Նախիջևանի Ջահուկ գավառից և Նոր Զուղայից (**Քոսեան Յ.,** նշվ. աշխ., էջ 43: Տե՛ս նաև Smyrnelis M.-C. Les Armeniens Catholiques de Smyrne aux XVIII et XIX siecles. "Revue du Monde Armenien", t. 2, Paris, 1995-1996, p. 25-44): 1748 թ. նրանք ձեռնարկել էին մատուռ կառուցելուն (**Ալիշան Ղ.,** Սիսական, Վենետիկ, 1903, էջ 407): Զմյուռնիայում նրանց շարքերը համալրվեցին 1790-ական թթ.՝ Էնկյուրիից եկած գաղթականների հաշվին: Հետագայում այս հայերի մի մասը հաստատվեց Այդընում և Նազիլիում: Մինչև 1894 թ. Զմյուռնիայի և կից շրջանների կաթոլիկները ենթարկվում էին տեղի լատին արքեպիսկոպոսի, իսկ այդ տարվա հուլիսից՝ հռոմեական հայոց պատրիարքարանի իրավասությանը (Հայրենիք, 14.VII.1894):

սրանց համապատասխան խորհուրդներով: Զմյուռնիայի և թեմերի վարչությունները գլխավորում էր առաջնորդը[28]: Առաջին աշխարհամարտի, ապա հունական գրավման պայմաններում (1919 մայիս-1922 սեպտեմբեր) ազգային մարմինների մեջ առաջնորդի հետ միասին կարևորվեց քաղաքական ժողովի և սրա տնտեսական խորհրդի նշանակությունը: Զմյուռնահայության հնագույն հաստատության՝ Ս. Ստեփանոս եկեղեցու հաստյթները տրամադրվում էին ազգային կառույցներին՝ դպրոցներին և Լուսավորչյան հիվանդանոցին (հիմն. 1801 թ.): 1842 թ. հիմնվեց Զմյուռնիայի երկրորդ՝ Ս. Լուսավորչյան եկեղեցին: Հիվանդանոցին կից նույնանուն եկեղեցի կառուցելը նպատակ ուներ առաջինն ապահովել նյութապես: Եկեղեցին ու հիվանդանոցը նորոգվել են 1879 թ.՝ մեծահարուստ Հովհաննես և Հակոբ Սպարթալյանների ծախքով:

Շուրջ մեկ և քառորդ դար գործեց զմյուռնահայերի Ս. Մեսրոպյան վարժարանը, որ XVIII դ. վերջին հիմնել էին Ապրոյանները: Վարժարանի առաջին տեսուչն է եղել բանաստեղծ Հովհան Վանանդեցին՝ «Ոսկի դար Հայաստանի» և այլ քերթվածների հեղինակը: 1831-1856 թթ. այս վարժարանի տեսչությունը վարում էր հայ մանկավարժության երախտավոր Ռուբեն Անդրեաս Փափազյանը: Պետրոս Յուսուֆյանի նվիրատվության շնորհիվ նա 1830-ական թթ. վարժարանում մտցրեց ֆրանսերենի և անգլերենի ուսուցում: Լինելով ժամանակի լայնախոհ մտավորականներից մեկը՝ Ռ. Փափազյանը վարժարանի սաների ուժերով հիմնեց դպրոցական թատրոն, ապա տպարան, որտեղ տպագրվել են նրա աշակերտների ստեղծագործությունները: Ի տարբերություն ժամանակի այլ հայկական դպրոցների, Ս. Մեսրոպյանի վարչությունը անկախ է եղել առաջնորդարանից: Այն տնօրինել են աշխարհական հոգաբարձուները՝ դեռևս թանզիմաթից էլ առաջ[29]: Ս. Մեսրոպյանն ուներ հիմնավոր համբավ, այստեղ սովորելու էին գալիս շատ աշակերտներ ամենատարբեր երկրներից: Գ. Պատկանյանն այն համարում էր «նոր Աթենք»՝ հայ պատանիների համար: Այստեղ են սովորել XIX դ. մշակութային խոշոր գործիչներ Ստ. Ոսկանյանը, Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը, Գ. Կոստանդյանը, Մ. Նուպարյանը, Գր. Մսերյանը և ուրիշներ:

1820-ական թթ. սկսած գործում էր Զմյուռնիայի իգական դպրոցը, որ նախապես կոչվում էր բարերար Հ. Սարգսյանի անվամբ, իսկ 1845 թ. հրդեհից հետո ի նորո կառուցվեց տիկին Հռիփսիմե Կոստանդյանի (Գ. Կոստանդյանի մայրը) ձեռնտվությամբ (1849) և վերանվանվեց Ս. Հռիփսիմյան դպրոց: Թանզիմաթի տասնամյակներին Ս. Մեսրոպյանն ուներ 300-500 աշակերտ, Ս. Հռիփսիմյանը՝ 150-300, որ մոտավորապես պահպանվեց մինչև գաղթօջախի վախճանը:

---

[28] Զմյուռնիան Էջմիածնի «տէրունի» թեմն էր մինչև 1825 թ., որից հետո այն անցել է Կ. Պոլսի պատրիարքության իրավասությանը: Էջմիածնի կողմից Զմյուռնիայի թեմի վերջին առաջնորդն էր Ստ. արք. Ենոքյանը (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 51, վավ. 2, 197, թղթ. 54, վավ. 223):

[29] Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1477, 1481-1482:

1850-ականի սկզբներին Զմյուռնիայում գործում էր Աղաբեկյան վարժարանը, որի տեսուչներն էին Մ. Աղաբեկյանն ու Մ. Մամուրյանը: Այստեղ կիրառվեցին եվրոպական ուսուցման առաջավոր մեթոդներ և առաջինը հայոց մեջ՝ համատեղ երկսեռ ուսուցում: Նույն տասնամյակին և նույնպես կարճ ժամանակով գործեց Տ. Սավալանյանի մասնավոր դպրոցը:

Գաղթօջախի պատմության վերջին տասնամյակին հայտնվեցին ևս երկու կրթօջախներ՝ Պոյաճյան և Ավետիքյան վարժարանները: Հեղինակություն ուներ Մխիթարյան հայոց վարժարանը: Զմյուռնահայ վերնախավի մի մասը դիմում էր նաև օտար դպրոցներ: Այդ երևույթը սահմանափակում էր ազգային դպրոցների նյութական կարողությունները և, մյուս կողմից, նպաստում մեծահարուստ որոշ ընտանիքների ապազգայնացմանը, որ և տևական քննադատության է արժանացել առաջավոր մտավորականության կողմից:

Զմյուռնիայի թեմերում ևս, չնչին բացառություններով, հայերն ունեին իրենց դպրոցները: 1870-ականի վերջերին անգամ Կուշադայի 29 տուն և Բայանդրի 40 տուն հայերն ունեին իրենց դպրոցները[30]:

1762 թ. Զմյուռնիայում գրատպության ընդհատված գործը պետք է վերսկսեին ամերիկյան միսիոներները: Հ. Հալլոքի և մերթ՝ Գ. Գրիֆիտի անուններով կոչվող տպարանում 1835-1852 թթ. նրանք տպագրեցին կրոնական և ուսումնական բնույթի մի շարք գրքեր, նաև «Շտեմարան պիտանի գիտելեաց» մանկական պարբերականը:

1840-ական թթ. ստեղծվեցին ազգային գրատպության զարգացման նախադրյալներ: Շարք մտան Ս. Պապոյանի, ամենաերկարակյաց՝ Թաթիկյան, ապա «Արշալույս արարատյան» թերթի, «Արագածունյաց» ընկերության, Ս. Մեսրոպյան վարժարանի տպարանները: Զմյուռնահայ տպագրության գագաթ պետք է համարել Տետեյան եղբայրների հրատարակչությունը (1853-1892), որն իր բարձր որակների համար պարտական էր ավագ եղբոր՝ Տիգրան Հարություն Տետեյանի գործունեությանը: Եղբոր՝ Ա. Կ. Տետեյանի հետ միասին, ինքն էլ լինելով տաղանդավոր թարգմանիչ, Տ. Տետեյանն իր շուրջ համախմբեց զմյուռնահայ թարգմանիչների համբավված բույլը՝ Գր Չիլինկիրյանին, Մ. Մամուրյանին, Մ. Նուպարյանին և այլոց: Նրանք՝ առաջինը արևմտահայ իրականության մեջ և ծրագրված՝ թարգմանաբար հրատարակեցին Շեքսպիրի, Մոլիերի, Վոլտերի, Սվիֆտի, Շատոբրիանի, Սկոտի, Հյուգոյի, Դյումայի և եվրոպական այլ դասականների ստեղծագործությունները, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և այլն: 1860-ական թթ. այստեղ էր տպագրվում զմյուռնահայ գրեթե ամբողջ մամուլը՝ բացառությամբ իր սեփական տպարանն ունեցող «Արշալույս արարատյան» թերթի: 1878-1880-ական թթ. սկզբներին հիմնվեցին «Արևելյան մամուլի» և Մսերյան տպարանները[31]:

---

[30] Արևելյան մամուլ, 1879, N 3, էջ 437-439:

[31] Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 8, վավ. 21³, էջ 5:

Բ. Քեշիշյանի (հետագայում եղբոր՝ Բ. Քեշիշյանի) տպարանում (հիմն. 1907) տպագրվեցին զմյուռնահայ մեկ տասնյակից ավելի պարբերականներ: 1909-1910 թթ. թերթեր էր տպագրում նաև Հ. Շեքերյան տպարանը: Վերջին երկուսի հետ մեկտեղ՝ ընդհուպ մինչև գաղթօջախի կործանումը, գործում էին ևս երեք՝ Թաթիկյան, Մամուրյան և Թելլալյան տպարանները:

Զմյուռնիայի և շրջակայքի հանրային ու կրթական կյանքի մշտական քաջալերողն ու ուղեկիցներն էին բարեսիրական ընկերությունները: Իր գործունության լայն շառավիղներով անգերազանցելի մնաց «Սյունյաց» ընկերությունը (1841-1849), որին անդամակցում էին տեղաբնակ ու գաղթօջախների հայ և օտարազգի վաճառականներ, Լազարյանները՝ Ռուսաստանից, Ներսես Աշտարակեցին և այլն: Ընկերության նպատակն էր նպաստել կրթության տարածմանը: Նրա ջանքերով դպրոցներ բացվեցին Զմյուռնիային կից բնակավայրերում, նաև Վառնայում և Դարդանելի շրջանում: 1845-ի հունիսի հրդեհը անդարմանելի կորուստներ հասցրեց ընկերությանը, որն իր գոյությունը մի քանի տարի ևս պահպանեց զուտ անվանապես: 1840-ական թթ. մինչև դարավերջ և այնուհետև այս կամ այն տևականությամբ գործել են «Արագածունյաց», «Հայկազնյան», «Վասպուրական» և այլ ընկերություններ: Հիմնվեց «Հայ ընթերցատունը» (1869): Թատերական ասպարեզում հայտնի էր «Վասպուրական» ընկերությունը (որը 1860-ականի 1-ին կեսին Զմյուռնիայում կազմակերպել էր Ս. Էքշյանի և Հ. Վարդովյանի դերասանական խմբերի ներկայացումները):

XX դ. առաջին տասնամյակներին աչքի ընկան կանանց բարեսիրական ու կրթական ընկերությունները, ի թիվս այլոց՝ «Կրթասեր», «Ազգանվեր հայուհյաց», «Խնամակալ տիկնանց» և այլ ընկերություններ, որոնք, 1918-ից մասամբ համագործակցելով ամերիկյան «Նպաստամատույց»-ին, զգալի նպաստ բերեցին Ազգային կեդրո- նական որբանոցի կարիքները հոգալու հայրենանվեր գործին: Սրրանց կողքին մշակութային գործունեությամբ էին զբաղվում «Հայ ակումբի թատերասիրաց ճյուղը» և «Արտավազդ թատերասիրաց միությունը» (1921 թ. բեմադրել են Շիրվանզադեի պիեսները):

Զմյուռնահայերի մեջ դեռևս XIX դ. վերջերից մուտք էր գործել մարզական մշակույթը, որ հետագա տասնամյակներին տարածվեց համայնքի բոլոր խավերի մեջ: XX դարասկզբից ժողովրդականություն էր վայելում մարզական «Հայ որսորդաց ակումբը»՝ իր տարբեր մարզաձևերով և հատկապես ֆուտբոլի թիմով: Նույն ժամանակներում մրցելույթներ էր ունենում նաև հայկական “Gentlemans Team” ֆուտբոլի խումբը: Հայ ֆուտբոլիստներն այստեղ մրցում էին միմյանց, ինչպես և Զմյուռնիայի հունական, եվրոպական ու թուրքական թիմերի հետ, հանդես գալիս Կ. Պոլսի ֆուտբոլի մրցաշարերում:

Դժվար է գերագնահատել զմյուռնահայ մամուլի հասարակական-քաղաքական արժեքը հայ մտավոր մշակույթի պատմության մեջ, որչափով այն առաջադրել և արծարծել է ոչ միայն տեղական, այլև համազգային նշանակության հիմնահարցեր: Առաջին պարբերականն այստեղ ամերիկյան

բողոքականների հրատարակած «Շտեմարան պիտանի գիտելյաց» ամսագիրն էր (1839-1854), որը, սակայն, զուրկ էր ազգային հետաքրքրություններից ու բովանդակությունից: Այդ պահանջները կոչված էր գոհացնելու «Արշալույս արարատյան» թերթը (1840-1885, հիմնադիր խմբագիր՝ Ղ. Պալդազարյան, վերջում՝ Հ. Կ. Սվաճյան), որը բազմակողմանիորեն արտացոլել է հայ կյանքը՝ ունենալով պահպանողական ուղղություն: Այս թերթի հետ երեք տարի գոյատևել է «Հայրենասեր» շաբաթաթեր- թը (1843-1846), որն ուշագրավ է արևելահայ իրողություններին առնչվելու տեսակետից: Գրական թեքում ուներ «Արփի արարատյան» ամսագիրը (1853-1855)՝ Ա. Կ. Տետեյանի խմբագրությամբ, ունենալով գրական թեքում և հող հարդարելով զմյուռնահայ թարգմանական դպրոցի ստեղծման համար: 1860-ական թթ. հրատարակված մի քանի նոր պարբերականների կողքին առանձնանում են «Միություն» և հատկապես «Ծաղիկ» (1861-1867, խմբագիրներ՝ Գր. Չիլինկիրյան և Ա. Հայկունի, 1862-ից՝ միայն Գր. Չիլինկիրյան) պարբերականները: «Ծաղիկն» ակնառու նշանակություն ունեցավ արևմտահայ ազգային մարմինների ժողովրդավարացման, հասարակական կյանքի ու մշակույթի եվրոպականացման գործում: Երկար տասնամյակներ հեղինակավոր պարբերական էր Մ. Մամուրյանի հիմնադրած «Արևելյան մամուլը» (1871-1909, 1901-ից՝ Հ. Մամուրյանի խմբագրությամբ)՝ իր բազմաբովանդակ հրապարակումներով և հասարակական կարծիքի վրա ներազդելու լայն հնարավորություններով: 1908-ից հետո որդեգրել է ռամկավար հայացքներ: 1909 թ. «Արևելյան մամուլ» շաբաթաթերթը վերածվեց «Դաշինք» օրաթերթի (1909-1915), իսկ հրատարակության վերջին շրջանում (1919-1922) վերստացավ հին՝ «Արևելյան մամուլ» անվանումը (խմբագիր՝ Հ. Մամուրյան):

Զմյուռնահայերի մտավոր և հատկապես լրատվական պահանջմունքները մի հայտնի չափով լրացնում էին XIX դ. վերջին և XX դ. առաջին տասնամյակներին լույս տեսած թերթերը՝ «Իզմիրը», «Արշալույսը», «Աշխատանքը» և այլն: 1910-ական թթ. զմյուռնահայերի աշխուժացած ազգային կյանքը առաջադրում էր նաև երգիծանքի պահանջմունքը: Ցեղասպանությանը նախորդած շրջանում հրատարակվում էին «Հտպիտ», «Մոծակ» և «Փեթակ» երգիծաթերթերը՝ մի կարճ ժամանակ և դադարելով տարբեր պատճառներով: Լուրջ և արդիական գրական ու գեղագիտական արժեք ունեցավ Զ. Գազազյանի խմբագրությամբ հրատարակվող «Հայ գրականություն» հանդեսը (1911-1914): 1919-1921 թթ. Զ. Գազազյանը խմբագրել է նաև «Միմոս» շաբաթաթերթը:

Զմյուռնիայի հայ գաղթօջախի պատմության ու հասարակական իրականության վերջին էջերն արտացոլվել են «Արևելյան մամուլ» և «Իրավունք» թերթերում, ինչպես և «Ատրուշան», «Պատրաստ», «Դափնի» հանդեսներում:

1915 թ. աշնանը Զմյուռնիայի և շրջակայքի հայության վրա ևս փլվեց ցեղասպանության արհավիրքը: Երիտթուրքական կառավարությունը

նախապես ծրագրել էր տեղահանության միջոցով ոչընչացնել Այդընի վիլայեթի ողջ հայ բնակչությանը, որի թվաքանակը, ըստ Լեփսիուսի, Զմյուռնիայում հասնում էր 27.200-ի[32]: Տեղահանումները սկսվեցին բուն քաղաքում՝ 1915 թ. նոյեմբերի 15-ին և 1916 թ. հոկտեմբերի 25-ին (մասնակիորեն), Դիքիլիում՝ 1915 թ. օգոստոսին (ամբողջովին), Քրքաղաճում՝ 1915 թ. նոյեմբերին (մասնակի), Կուշադայում՝ 1916 թ. փետրվարին (ամբողջովին), Էյդեմիշում՝ 1916 թ. նոյեմբերին (մասնակի), ինչպես և Բերգամայի շրջակայքում՝ Ֆրնուզում[33]: Թուրքական իշխանությունները Զմյուռնիայում այս գործողությունները իրականացրեցին նույն սցենարով, ինչպես գրեթե ամենուրեք՝ կայսրությունում: Ձերբակալվեցին ու բանտ նետվեցին բազմաթիվ մտավորականներ, որոնցից շատերը աքսորվեցին երկաթուղով՝ «անվերադարձ»:

Զմյուռնիայում հայ բնակչության տեղահանությանը միջամտեց այնտեղ տեղակայված գերմանական զորքերի հրամանատարությունը, որին թուրքական իշխանությունների գործողությունները տագնապ էին պատճառում այն իմաստով, որ այստեղ վայրագությունները հնարավոր չէր թաքցնել, և դրանց հեղինակների դաշնակից գերմանական բանակը կարող էր մեղադրվել ոճրագործների հետ մեղսակցության մեջ: Հրամանատարության միջամտությունից հետո թուրքական իշխանությունները չհանդգնեցին շարունակել ծրագրված գործը և հայերի տեղահանումները դադարեցվեցին[34]: Համաշխարհային պատերազմի ավարտից բավական հետո, 1919 թ. մայիսի 15-ին Զմյուռնիա մտան հույները՝ փոխարինելով զինադադարից հետո այստեղ հայտնված անգլիացիներին: Սևրի պայմանագրով (1920 թ. օգոստոսի 10) Զմյուռնիան անցավ Հունաստանին: Սակայն թուրքերը, ինչպես հայտնի է, չհաշտվեցին պատերազմից հետո ստեղծված կացությանը: Դրանից ելք գտնելուն մեծապես նպաստեց նրանց թերևս, միակ ճշգրիտ հաշվարկը՝ երևութական համագործակցությունը Խորհրդային Ռուսաստանի հետ՝ ընդդեմ արևմուտքի:

Այդ համագործակցությունը խորհրդային իշխանությանը սնուցանում էր համաշխարհային հեղափոխության պատրանքներ, որի դիմաց քեմալականները ստանում էին ամենևին էլ ոչ պատրանքային, այլ իրական նյութական օգնություն՝ դրամ, զենք ու զինամթերք՝ հույների դեմ մղած պատերազմում: 1921 թ. վերջերին Անկարա մեկնեց խորհրդային ժողկոմ Մ. Վ. Ֆրունզեն՝ ստորագրելու Ուկրաինական ԽՍՀ և Թուրքիայի միջև պայմանագիրը (1922, 2 հունվարի): Իրոք, այս ամենը մեծապես նպաստեցին հույների դեմ պատերազմում Քեմալի ձեռք բերած հաջողություններին[35]: Նույն՝ 1922 թ. աշնանամուտին թուրքական բանակը հարձակողական գործողություններ ծավալեց դաշնակիցներից լքված հույների դեմ, իսկ սեպտեմբերի 9-ին

---

[32] Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991, էջ 474:

[33] Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 8, վավ. 21[3], 21[8]:

[34] Նույն տեղում, թղթ. 8, վավ. 21[8]:

[35] Петросян Ю. А., Юсупов А. Р., նշվ. աշխ., էջ 45:

ներխուժեց Զմյուռնիա: Քաղաքի հայ և հույն խաղաղ բնակչությունը ենթարկվեց զանգվածային կոտորածի[36]: Սեպտեմբերի 10-ին և 13-ին հրդեհվեց Հայոց թաղը (Հայնոց): Բազմաթիվ ականատեսներ հետագայում պատմում էին, որ հրդեհը թուրքերի ձեռքի գործն էր, որը պետք է հուսալքեր քաղաքի բնակչությանը և զրկեր նրան դիմադրելու որևէ կարողությունից: Խորհրդային պատմագիտության մեջ փորձեր եղան հետագայում կեղծելու իրողությունը և պնդելու, որ Զմյուռնիան հրդեհել են «ինտերվենտները»՝ անգլիացիները, հույները և հայերը, և որ Զմյուռնիայի առումը, իբր, թուրքական ազատագրական շարժման ավարտն էր[37]: Հայերի մի մասն ապաստանել էր Ս. Ստեփանոս եկեղեցու բակում, ապա անցել ծովեզերք՝ եվրոպական նավերով կոտորածից փրկվելու հույսով: Սակայն նրանց և մյուս քրիստոնյաների կոտորածը կատարվեց նաև այստեղ՝ եվրոպական մարտանավերի դեմ հանդիման: Սրանք, ելնելով իրենց երկրների քաղաքական նախասիրություններից, գրեթե ոչինչ չարեցին միջամտելու և զոհերին փրկելու համար: Թուրքերը անգամ ջրասույզ արեցին մի քանի նավեր, որտեղ ապաստանել էին շատ հետապնդվողներ: Հրդեհի հետևանքով Զմյուռնիայում այրվեցին բազմաթիվ քրիստոնեական եկեղեցիներ, դպրոցներ, հիվանդանոցներ, հյուպատոսարաններ, բանկեր և այլն: Բայց ամենից առավել աղետալին հույների և հայերի ճակատագիրն էր, երբ զոհվեց շուրջ 100 հազար մարդ (հայերից՝ 30 հազար. աղետին նախորդող շրջանում Զմյուռնիա էին լցվել նաև շրջակա բնակավայրերի հայ բնակիչները, ինչպես և բազմաթիվ փախստականներ՝ Կիլիկիայից): Կոտորածներից ազատվեցին սակավաթիվ հայեր և հույներ, որոնց հունական կառավարությունը նավերով տեղափոխեց Հունաստան: Ավարտվեց Զմյուռնիայի հնամենի հայ գաղթօջախի կյանքը, որի արմատները սկիզբ էին առնում դեռևս XI-XII դարերում, Բյուզանդական կայսրության ժամանակներից, շատ ավելի վաղ, քան այստեղ ոտք էին դրել օսմանյան նվաճողները:

АРМЯНСКАЯ КОЛОНИЯ СМИРНЫ

(вторая половина XVIII в. – 1922)

ХАРАТЯН А. А.

Резюме

После Константинополя армянская колония Смирны в XVIII в. являлась вторым крупным экономическим и культурным центром армянского населения Османской Турции. Колония сохраняла свою социальную целостность с присущими ей классическими компонентами, каковыми

---

[36] *Զմյուռնիայի քրիստոնյա բնակչության դեմ քեմալականների արած վայրագ հաշվեհարդարի մասին տե՛ս* **Houseoian M.** *The Smyrna Affair (N. Y., 1971) հիմնարար աշխատությունը:*

[37] *Իրադարձությունների այդպիսի խայտառակ նենգափոխման քննադատությունը տե՛ս* **Ներսիսյան Մ. Գ.,** *Պատմության կեղծարարները, Ե., 1998, 116-124:*

являлись крупные торговцы, купцы, интеллигенция и представители духовенства. Армяне Смирны поддерживали коммерческие связи с экономическими и культурными центрами Италии, Голландии, Англии, Франции, России и иных европейских стран.

Тесные связи с духовным центром армян – Эчмиадзином – способствовали культурно-просветительскому развитию колонии и в сфере армянской культуры. В сентябре 1922 г. Смирна была захвачена кемалистами, которые осуществили заключительный акт геноцида армян и греков. Лишь незначительная часть христианского населения Смирны на греческих кораблях была перевезена в Грецию.

THE ARMENIAN COLONY OF SMYRNA
(The second part of XVIII c. – 1922)

A. KHARATYAN

Abstract

In XVIII century, the Armenian colony of Smyrna was the second economic and cultural centre of the Armenian population in the Ottoman Empire after Constantinople. The colony preserved its social entity with classical components constituted of rich merchants, intellectuals, and clergymen. The Armenians of Smyrna maintained commercial relations with economic and cultural centres of Italy, Holland, England, France, Russia and other European countries.

Close contacts with the spiritual centre of Armenians – Ejmiatsin, contributed to cultural-educational development of the colony in the sphere of Armenian culture. In September 1922, Smyrna was occupied by Kemalists who committed the final act of the Armenian genocide and genocide of Greeks. Only a little part of the Christian population of Smyrna was transported to Greece by ships.